

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ուղևորական ծրագրով նախատեսված 2014 թ. 1-ին կիսամյակի ընթացքում Կոտայքի մարզում իրականացված միջոցառումների վերաբերյալ

h/h	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքը	Ֆինանսական ապահովումը
1.	Գենդերային քաղաքականության հիմնահարցերի լուսաբանում մարզի գանգվածային լրատվության միջոցներով	Տեղափոխվել է երկրորդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	«Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հայեցակարգի համաձայն 2014թ. հայտարարված մրցույթի ամփոփագրի և համայնքային խնդիրների վերլուծության համատեքստում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցի ներկայացում	<p>Տարածքային խորհրդակցությունում /03-04.04.2014թ./ ներկայացվեց, որ ՀՀ վարչապետի կողմից սահմանված «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության անցկացման համար մրցանակաբաշխության հայեցակարգը, մրցանակների շնորհման կարգը և մասնակցության հայտի ձևը շրջաբերական սամակի միջոցով (07.03.2014թ.) ուղարկվել է մարզի բոլոր համայնքների ղեկավարներին, միաժամանակ տեղադրվել է Kotayk.gov.am կայք էջի հայտարարությունների բաժնում:</p> <p>Մրցանակաբաշխությանը մասնակցության հայտեր էին ներկայացրել 6 քաղաքային (<b>Հրազդան, Եղվարդ, Բյուրեղավան, Չարենցավան, Աբովյան, Ծաղկաձոր</b>) և 7 գյուղական (<b>Նոր Գեղի, Լեռնանիստ, Բջնի, Պտղնի, Վերին Պտղնի, Արզական, Զովունի</b>) համայնքներ:</p> <p>Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 20.03.2014թ. նիստում քննարկվեց ներկայացված հայտերը և առաջարկվեց տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել մարզի 3 քաղաքային և 2 գյուղական համայնքների հայտային տվյալները: Որոշվեց՝ «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությանը ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզի հետևյալ՝ <b>Հրազդան, Եղվարդ, Բյուրեղավան</b> քաղաքային և</p>	

		<p><b>Նոր Գեղի, Լեոնանիստ</b> գյուղական համայնքների հայտերը:</p> <p>&lt;&lt;Լավագույն քաղաքային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ&gt;&gt; անվանակարգում հաղթող է ճանաչվել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքային համայնքը:</p> <p>Ներկայացվեց համայնքային խնդիրների վերլուծության համատեքստում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը՝ նշելով համայնքերում գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ առաջարկվող մոտեցումները:</p>	
--	--	--	--

**Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2014թ. Կոտայքի մարզում 1-ին կիսամյակում իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն**

h/h	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքը	Ֆինանսական ապահովումը
1.	<<Արվեստի դերը գենդերային բռնության դեմ պայքարում>> թեմայով կլոր սեղան բանավեճի կազմակերպում մշակութային հաստատությունների տնօրենների համար:	Արովյանի երաժշտական դպրոցում մայիսի 16-ին մշակութային հաստատությունների տնօրենների խորհրդակցության շրջանակներում կազմակերպվել է կլոր սեղան, որին մասնակցել են նաև համայնքապետարանների աշխատակիցներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ:	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	<<Ընդդեմ գենդերային բռնության>> խորագրով հեռուստատեսային քննարկումների կազմակերպում	Տեղավիճակվել է երկրորդ կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
5.	<<Գենդերային դերերի բաշխման և գենդերային բռնության հանդեպ հասարակության վերաբերմունքը նոր արժեքների ներթափանցման և գլոբալացման պայմաններում >>խորագրով <<Կլոր-սեղան>>բանավեճերի կազմակերպում դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենների համար	2014 թ. առաջին կիսամյակում Հրազդանի և Չարենցավանի տարածաշրջանների դպրոցներում դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենների համար կազմակերպվել է հիշյալ խորագրով միջոցառումը:	Ֆինանսավորում չի պահանջվում

## Իրականացված այլ միջոցառումներ

- 8.01.2014թ. - Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի հերթական նիստում գենդերային քաղաքականության և ընդդեմ գենդերային բռնության ռազմավարական և ազգային ծրագրերի ու գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 2013թ. ընթացքում կատարած աշխատանքների ամփոփում և հաշվետվության ներկայացում:
- Տեղի է ունեցել ՀՀ Կոտայքի մարզպետի հանդիպումը համայնքների ավագանու կին անդամների հետ /28.02.2014թ./: Մարզի գենդերային իրավիճակի վերլուծություն, առաջարկություններ առաջիկա անելիքների մասին, քննարկում մարզում գործող գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի հերթական նիստում:
- 20.03.2014թ. - Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի հերթական նիստում տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային հավասարության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից սահմանված ամենամյա «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության հայեցակարգի, մրցանակների շնորհման կարգի և մրցանակաբաշխության մասնակցության հայտերի ներկայացում, արդյունքների քննարկում և գնահատում:
- 03.04.2014թ. - տարածքային խորհրդակցությանը (Կոտայք, Նաիրի) «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության հայեցակարգի համաձայն 2014թ. հայտարարված մրցույթի ամփոփագրի ներկայացում
- 04.04.2014թ. - տարածքային խորհրդակցություն (Հրազդան) համայնքային խնդիրների վերլուծության համատեքստում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցի մասին
- 04.04.2014թ. – Ազգային պատկերասրահում «Լավագույն գենդերային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» վարչապետի մրցանակաբաշխության համար հայտարարված մրցույթի արդյունքների ամփոփում: «Լավագույն քաղաքային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» անվանակարգում հաղթող է ճանաչվել Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքային համայնքը:
- 06.05.2014թ. - «Կին առաջնորդ» ֆորումի համակարգող խորհրդի կողմից «Հայաստանի մարզերում ենթահանձնաժողովներ ստեղծելու» ծրագրի շրջանակներում կայացել է հանդիպում, առաջիկա ծրագրերի ներկայացում, կանանց մարզային խորհրդի ստեղծում և հետագա համագործակցության քայլերի նախանշում: